

ՔՐԻՍՏՈՍԻ ԶՍՐԶՍՐԱՆՔՆԵՐԸ

ՕՐԵՐ ԱՄՄԵՐԳՎՈՒԻ ՄԷՋ *

(Վ. Սպասուխի ճանապարհորդական յիշողութիւններից **
խաղաւածոյ քարգմանորիւն)

1.

Ուրբաթ՝ 1890 թ. յուլիսի 18-ին երկաթուղիով ճանապարհ ընկայ Մ'իւնիսէնից Պարանկիրիսէն, գնացքի մէջ կային առաւելապէս անգլիացիք և հոգեորականներ։ Այն տեղ ճանապարհորդներին սպասում են հինգ — վեց տասնեակ կառքեր և տանում են նոցա մի խճուղիով, որ շինուած է յատկապէս հանդիսականներին «չարչարանաց ներկայացման» տեղը հասցնելու համար։ Ամբողջ Օրեր Ամերգատուն մի հատ երկարագոյն փողոցով փոքրիկ գիւղ է։ Իւր ամբողջ շրջապատը կոչւում է տէրտէրական աշխարհ, որովհետև ամենայն քայլափոխում պատահում են վանքեր և եկեղեցիներ։ Այս յետ ընկած անկիւնում՝ հին ասպետական ժամանակներից սկսած՝ վանքերը եղել են վառած ճրագ — մտաւոր և գեղարուեստական զարգացում տարածելու համար։ Հին դարերում այս ճանապարհով Գերմանիա բերում էին ոչ միայն իտալական սպրանքներ, այլ և տարածւում էր իտալական գեղարուեստն ու քաղաքակրթութիւնը։ Բոլոր տեղական ժողովուրդը արուեստագիտական կրթութիւն ունի, ամենայն խրճիթում կան նկարիչներ և փորագրիչներ, առաւելապէս աստուածապատկեր քանդակողներ, խաչելութիւն և սրբոց գէմքեր փորագրողներ։ Օրեր Ամերգատուի աները երկյարկանի են, մեծ մասով քարաշէն, սպիտակ ներկուած, և սպիտակ աստառի վերայ զարդարուած են որմանկարների կամ Բրիտանոս կամ ամպերի մէջ սրբեր և այլն։ Կան եւրոպական տարազով շքեղ հիւրանոցներ, և ի հարկէ հարուստ մեծատունների հա-

մար. բայց անթիւ անհամար հասարակ պանդոններ ևս գտնոււմ են, բոլորն էլ միաձև, որոնց վերի յարկի իւրաքանչիւր սենեակում՝ ներկայացման օրերին՝ զլուում է 3 կամ 4 մահճակալ, աշխարհքի ամենայն կողմերից եկող հանդիսականների համար չորս-չորսական մարկ վարձով։ Գիւղը ձգուած է Ամերու գետակի երկարութեամբ, որի մի ծայրին եկեղեցի է կանգնած, իսկ միւս ծայրին՝ հռչակուած թատրոնը յունական ոճի ճակատով և գորշախառն երանդի նկարներով։ Գետի միւս ափում բլրի վերայ ամբռնուում է հոյակապ հսկայական խաչելութիւն՝ շուրջը Աստուածածինն ու աշակերտները խմբուած։ Այս արձանը շինուած է գեղնագոյն քարից՝ Բաւարիայի Լուդովիկոս Ա. թագաւորի ծախիւք։

Այսպէս են վայրերը։ Շարաթ օրը եկող այցելուների խիտ խոնութիւնը սոսկալի էր, բոլոր աները լցուել էին, նոյն իսկ գիւղական ամենահամեստ խշտիկները, ով որ տեղ չէր գտել, քաշուել էին շրջակայ շէները։— Շքեղ կառքերը և ձիաւորները մեծ դժուարութեամբ ճանապարհ էին բանում հեաիոտս զբօսնող ամբոխի մէջ, ուր անզոտ-սաքսոնները առաւել էին գերմանացիներից և հոգեորականները՝ աշխարհականներից։ Հոգեորականների կարգում շատերի մանիշակագոյն զգեստը ցոյց է տալիս, որ նոքա կաթոլիկ եպիսկոպոսներ են, — Հէնց որ մթնանում է, փողոցը դատարկում է։ Ծանապարհորդները վաղ են քնում։ Հետեւեալ օրը առաւօտեան ժամի 6-ին պատարագ է լինում, իսկ ճիշդ 8-ին սկսում է ներկայացումը։ Նախ քան սորա նկարագրութիւնը, մի քանի խօսք կ'ասեմ Բրիտանոսի չարչարանքները բեմ հանելու ծագման և այժմեան կազմակերպութեան մասին։

2.

Աշխարհի ամեն ծայրերից այս թատրոնն հաւաքուող բանիմաց հանդիսականների մեծամասնութիւնը՝ առ հասարակ դուրս է բերում այն տպաւորութիւնը, իբր թէ կենդանացած տեսան՝ զարմանալի հրաշքով պահպանուած՝ միջնադարեան խորհուրդները (միտակիրաները), բուն ժողովրդական և անպաճոյճ բանաստեղծութեան զողտրիկ ծաղիկը,

* Տես նաև Արարս 1895 յուլիս, եր. 229
** Լիակատ քննարկ գեղարուած է „Братская помощь пострадавшим от Турции армянам“ ժողովածուի մէջ։

որ շարունակում է այս կորած վայրում՝ սակաւակիրթ գուհիկներէ մէջ՝ անուշաբուրութեամբ փթթել: Սակայն այս կարծիքը ճշմարտութեան համեմատ չէ: Passionspiel-ը (չարչարանաց ներկայացումը) ոչ այլ ինչ է: Բայց եթէ մի արուեստական արտադրութիւն, այն է զպրոցական ուսումնականութեան, զգուշաւոր հրահանգութեան և կրօնական շրջանկատ քաղաքականութեան պատու: Բըրխտոսի չարչարանաց ներկայացումը իւր արմատով հաստատուել է միջին դարերում: Բայց իսկապէս ծագել է՝ գերմանական հողի վերայ տեղափոխուած՝ իտալական վերածնութիւնից և այն կրօնական շարժումից, որի զլուխը կանգնել էին ճիզուխտները. դա ուրեմն ճշնունդ է այն հակաբարեփոխութեան, որով հռովմէական կաթողիկոսութիւնը XVII դարում վերանորոգուեցաւ:

Արեւմտեան Եւրոպայի ամենայն տեղ, ուրեմն Գերմանիայում ևս, անսովոր բան չէին խորհուրդները, Հին և Նոր Կտակարանից ներկայացումները: Գերմանիայում դոքա էին պարզ միամիտ հաւատոյ արտադրութիւն և լուրջ գործ: Առաջին նպատակն էր բարեպաշտութիւնը, առաջին հոգն էր հանդիսացրած նիւթի էութիւնը, և ոչ եթէ արտաքին շքեղութիւնն ու արդուզարդը, որ ներգործել կարող են զղայական երեւակայութեան վերայ: — Իսկ Ալպերից այն կողմը՝ վերածնութեան ժամանակ՝ զլիաւոր հանգամանք դարձաւ ներկայացման հանգերձանքը, զեղարուեստական շքեղութիւնը, որ հետզհետէ միշտ կատարելագործուեցաւ յունաց և հռովմայեցոց թատրոնի ծանօթութեան բարգաւաճման շարքով: XVI դարում թատրոնական ճարտարապետութիւնը ծայրագոյն զարգացման հասաւ: Այժմ արդէն մեծ արուեստագէտները ձեռնամուխ եղան գործը ձոխացնելու. վիչնցայում սկսեց համբաւուր Պալլադիօ (1518—1680) կառուցանել Ուլիմպեան թատրոն, որ վերջացրեց նորա աշակերտ Սկամոցցին:—Օրեր Ամմերգաուի բեմական հանդերձանքը զարմանալի նմանութիւն ունի Պալլադիոյի Ուլիմպեան թատրոնին: Օրեր Ամմերգաուի ներկայացումները առաջին անգամ սկսուել են XVII դարու առաջին կիսին, այ-

սինքն այն ժամանակ, երբ որ ճիզուխտները, հաստատ ոտք գնելով Բաւարիայում, իշխում էին ոչ միայն քաղաքականութեան մէջ, այլ և գեղարուեստի մէջ, երբ որ նոքա ամեն բանի նախաձեռնող էին, օրինակ էին տալիս, ճաշակի օրէնսդիր էին, և երբ որ նոքա պղզեցութեան էր ենթարկուած ամբողջ հոգեւորականութիւնը, թատերախաղի արուեստին նուիրած բոլոր կրօնական միաբանութիւնները: Կրօնաւորները՝ հին դասական օրինակներին հետեւելով՝ թատրոնական արուեստի կատարելագործութիւնները մտցրեցին ոչ միայն ճարտարապետութեան մէջ, այլ և քանդակագործութեան, երաժշտութեան և մեջկատակութեան նկատմամբ, այն ևս որոշ կրօնական նպատակով, որպէս զի մաքառեն և մըրցեն բողոքականութեան դէմ և զօրացնեն ժողովրդեան հաւատարմութիւնը դէպի կաթողիկ դաւանութիւնը, ներգործելով նորա զգայականի վերայ, շլացնելով նորա երեւակայութիւնը: Դոցա բոլոր ջանքն ու յեղափոխութիւնը այնտեղ հասաւ, որ ամենայն կարգի գեղարուեստութիւնները թատերախաղի շրջանակի մէջ ազդողագոյն կերպով միացուցին, ուր թատերախաղի բուն հիմքը, բնարանի բովանդակութիւնը, բեմի վերայ լուռող խօսքերը՝ մի երկրորդական բան դարձան: Յաճախագոյն բեմի վերայ լուռւմ էր անհասկանալի լատինական լեզուն: Իսկ իմաստն ըմբռնել տալու համար տպագրուած էին օժանդակ տետրներ (perioccha—քաղուածոյք). հէնց այժմ ևս Օրեր Ամմերգաուի օտարերկրեայ այցելուները նրմանապէս մեծ եռանդով չեն լուծւում բեմի խօսքերը, նոքա աւելի տեսնելու են զալիս:— Բնարան խօսքերը առնուած են միջնադարեան թատերական խորհուրդներից, բայց խիստ փոփոխուած են և անձանաչելի չափով զարդարուած. նմանապէս փոխուել է բեմի ամբողջ հանդերձանքը իտալական վարպետների, քանդակագործների, փորագրողների կրճածեփողների օգնութեամբ, անուանի խրմբապետների գործակցութեամբ և փայլուն զգեստների փառազարդութեամբ:

Ճիզուխտների այսպէս զօրգուրած կրօնական թատերախաղը XVII դարու վերջը և XVIII դարում կատարելապէս լուծուեցաւ և

նսեմացաւ, որովհետեւ ժամանակի եւ ճաշակի փոփոխութեան հետ՝ բեմը բաժանուեցաւ եկեղեցուց եւ դարձաւ աշխարհական: Այժմ Գերմանիայում յարգի են դառնում խաղաղական օսերան եւ Ֆրանսիական դերասանական խումբը: Ճիշդութեան ներկայացումների համար պետական գանձարանից շտայլած դրամը՝ այժմ այլ կողմն է հոսում — օտարազգի նոր միջազգային բեմի պահպանութեան համար: Իմացական եւ բարձր հասարակութիւնների համար այլ եւս հեռաքրքրական չէին ս. Գրոց բնաբանները: Այսպիսի բնաբանները այնուհետեւ զուարճալի եզան միայն հասարակ ամբոխի համար, որի ներկայացումները զնալով աւելի սլլանդակ եւ դեհհական էին դառնում: Այն տեղ կուտակոււմ էին առաւելապէս սյլարանութիւններ. գործող անձինք դառնում էին վերացական զազափարներ՝ մահի մեղքի կամ հեթանոսական զիցարանութեան աստուածութիւններ: Ենյն իսկ կաթոլիկ հոգեւորականութիւնը, տեսնելով հեթանոսութեան այսպիսի խառնութիւնը քրիստոնէութեան մէջ, որով կրօնական առարկաների պատկերացումը խեղկատակ կերպարանք էր առնում վերջ ի վերջոյ բռնադատուեցաւ բեմի վերայ կատարուող կրօնական ներկայացումների դէմ զինուել եւ նոցա արգելումը պահանջել: Ըստ ինքեան XVІІІ դարու ողին էլ հակակրօնական էր եւ այնքան բանապաշտական, որ պատրաստ էր կրօնական առարկաները նկատել ոչ միայն ժխտական, այլ ծաղրական տեսակէտից: Հոգեւորականութեան մէջ հաստատոււմ է այն զազափարը, թէ կրօնական-սրբազան խորհուրդները բացէ իր բաց անթոյլատրելի են բեմի վերայ հանդիսանալու: — 1770 թ. մարտի 31-ին Բաւարիայի կուրֆիւրստ Մաքս Եօզիֆ ІІІ-ը անսպայման կերպով արգելեց Բրիտտոսի շարչարանաց ներկայացումը բեմի վերայ: Այսպէս ուրեմն զիւանակալութեան եւ ոստիկանութեան ծանր ձեռքը զրուեցաւ զեղարուեստի այս ճիւղի վերայ: — Արդ խնդիր է ծագում թէ 1770 թ.-ի արգելքի դէմ ի՞նչպէս կարողացան ժողովրդական-կրօնական ներկայացումները շարունակ գոյութիւն պահպանել Օրեր Ամերգառուի մէջ: —

Աւանդութիւնը պատմում է, թէ կր

որ 1633 թ. Բաւարիայում սեւ մահը աւերածութիւններ էր գործում: Օրեր Ամերգառուի հասարակութիւնը բարեպաշտական ուխտ ուխտեց տասը տարին մի անգամ կատարել Տեառն մերոյ մահուան ողբերգութիւնը: — Հէնց որ այս ուխտը զրուեցաւ, անմիջապէս ժանտամահը զաղարեց: Սկսուած ներկայացումները զանազան ընդհատումներով շարունակուեցան մինչև արգելման 1770 թուականը: Կառավարութիւնը բացատրել էր, թէ ուխտած խօսքը կարելի է կատարել մի այլ բարեպաշտական արարողութեամբ, քարոզով կամ հսկումով: Սակայն ժողովուրդը մի քանի անգամ զիմեց տէրութեան, արգելքի ջնջումը խնդրելով մանաւանդ որ նորա գորութիւնը վաղուց թուլացել էր: Արգելքի շարժառիթները աչքի առաջ ունենալով, Օրեր Ամերգառուեցիք Հին եւ Նոր Կտակարանի ներկայացումների թոյլտուութիւն էին խնդրում այն պայմանով, որ այսուհետեւ նորա կատարուին դայթակղութեան առիթ տուող անհեթեթութիւններից մաքրուած: 1810 թ. համայնքի պատգամաւորութիւնը բուրգոմիստրի առաջնորդութեամբ, եկաւ Միւնխեն լուծումը խնդրելու համար: Պատգամաւորութեան խնդիրը զրել էր Սամբուզա քահանան, այն ժամանակուայ թագածառանգի նախկին դատախարակիցը: Որդու բարեխօսութեամբ թագաւորը հաճեց ներկայացումների հրամանը տալ:

Տեսլարանը դարու ոգու համեմատ յարմարեցնելու եւ նորանից այլ եւ այլ անհեթեթութիւններն ու անվայելչութիւնները հանելու ստիպողական հարկը՝ խիստ բարեբար ազդեցութիւն գործեց տեսլարանի արամբարանական մասի վերայ, այսինքն բնազդի բովանդակութեան վերայ, որը որ այժմ բեմից լրոււմ է հետեւեալ ձևով: Հին ժամանակներից մնացած կայ մի սպաղրուած թատերախաղ 4500 տող ոտանաւորով: Դա էլ մի ծաղկաքաղ է, երկու ուրիշ աղբիւրներից: Այդ ծաղկաքաղը խիստ անհանձար բան է եւ առաւելապէս մի խրատական դրուած է: XVІІ դարից սկսած՝ թատերախաղի մէջ ներմուծուել են զանազան յաւելուածներ, զանազան այլարանութիւններ, երևում է հոգին

և հրեշապի հետ խօսակցում է Քրիստոսի չարչարանաց մասին: Երբ որ մի անգամ 12,000 այցելու բաղմութեան յոյս կար, Օրեր Ամերգաուեցիք զիմեցին մի հոշակաւոր ուսումնական պրոֆեսոր վանականին, որ «Չարչարանաց» խօսքերը ժամանակի և դարու ոգուն յարմարեցնէ: Ահա այնուհետև հաստատուեցաւ ներկայացման այն բաժանումը և մասերի կարգաւորութիւնը, որ ցայսօր պահպանուած է: Թատերախաղի տեսարանները ընդմիջուած են exhibition-ներով, այսինքն (չին կտակարանից քաղած և Քրիստոսի չարչարանքները մարդարեացոյ) կենդանի պատկերներով:—Նախ քան որդերգութեան գործողութիւնների սկսուիլը՝ պրոսցենիումի (նախատեսարանի) վերայ երևում են «պահպան հրեշտակները», յունաց դասախմբի պէս մի բան, որ հանդիսականին ծանուցանում է, թէ ինչ պիտի կատարուի: Բացի պահպան հրեշտակներից, բեմի վերայ հանդէս են հանուած վերացական դադափարների անձնաւորումներ՝ մահ, մեղք, ազահութիւն, նախանձ, չար հրեշտակների զօրութիւն:—Թէ ինչ ճաշակ է իշխում այս գրուածքի մէջ, այդ իմանալ կարելի է ներկայացման վախճանական պատկերից, որ կոչուած է ապօթէօզ (աստուածարարումն, փառաւորութիւն): Բեմի վերայ կանգնեցուցած է սուրբ սեղան, վերան եօթը կնքով կնքած մի զիբք, իսկ սորա վերայ դառն Աստուծոյ ճաճանչադարդ, դափնեայ պսակով և խաչվառով: Սեղանի առջ շլթայակապ ընկած են՝ մեղքը, մահը և սատանան, սեղանը շրջապատում են նախաձնողներն ու մարդարեւները:

Յիշեցինք, թէ կրօնական տեսարանների դէմ յարուցած հստածանքը թուլացնելու համար՝ կարևոր դատուեցաւ ներկայացումները մաքրել զիցարանական աւելորդութիւններից և նոյն իսկ նոցա լեզուն ու խօսքերը փոխել, այսպէս որ ներգործութիւնը լինի աւելի պարզ, ազատ և իրական: Այս փոփոխութիւնն էլ ձեռնարկեց մի կրօնաւոր: Նա ներկայացումից անխնայ կերպով դուրս ձգեց բոլոր այլաբանութիւնները, ոտանաւորը պահպանեց միայն դասախմբի համար, այսինքն միայն խրատական-քնարերգական բաժնի հա-

մար, իսկ գործող անձինքների խօսքերը պարզ արձակ շարադրեց, ըստ հնարաւորութեան մէջը պահպանելով աւետարանի բնագիրը: Թատերախաղը վերջին փոփոխութեան ենթարկուեցաւ դարձեալ մի քահանայի ձեռքով, որ խիստ արձակ շարադրութիւնը դարձրեց անյանգ ոտանաւորի:

3.

Ներկայացումն սկսուած է առաւօտեան ժամի 8-ին և շարունակուած է մինչև երեկոյեան ժամի 6-ը, մի փոքր ընդհատմամբ կէսօրին, որ տևում է ժամ ու կէս: Նա կատարուած է բացօթեայ: Նա չի դադարում նոյն իսկ անձրեային եղանակին, որ այս լեռնային երկրում շուտ շուտ է կրկնուած: Հանդիսականների նստիլու տեղի մի մասը այժմ պաշտպանուած է այդ անյարմարութիւնից մի թեթեւ տանիքով: Բեմի վերայ բարձրանում են երեք շէնքեր զուլսը ծածկած, որոնցից մէկը՝ զլխաւորը՝ յունաց տաճարի ճակատով է և վարազոյր ունի, որ բացուած է, երբ որ այդ տաճարի ներսը ձևանում են հին կտակարանից առնուած կենդանի պատկերներ կամ կատարվում են զլխաւոր երեւոյթներ, ինչպէս որ են՝ խորհրդաւոր երեկոյ, Գեթսեմանի պարտիզում ազօթք կամ Գողգոթայի խաչելութիւն:—Այս տաճարի երկու կողմերում համաչափութեամբ կանդնեցուցած են միւս երկու փոքր շէնքերը, աճ կողմից կայիափա քահանայապետի ապարանքը, իսկ ձախ կողմից Պիղատոսի պալատը: Երկու կողմնակի շէնքերը զլխաւորի հետ միացուցած են կամարներով, որոնց տակից հեռու երևում են Երուսաղէմի փողոցները: Երեք շէնքերի առաջ կայ մի հրապարակ կամ պրոսցենիում կոչուածը, որի վերայ ժողովրդեան չորս հարիւր մարդու չափ բազմութիւններ արձակ շրջում են և ապա արագ դուրս են ելնում՝ կամ մտնելով տաճարը և կամ կամարների տակ փողոցների մէջ անյայտանալով:—Ամբողջ ներկայացումը բաղկացած է երեք անկախ մասերից:

Առաջին մասն է կազմում «պահպան հրեշտակների» դասախումբը, որ սաղմոսի նման հոգեւոր ոտանաւորներ է արտասանում

Թիւ ձայնով րայց երաժշտի ձայնակցութեամբ Թատերախաղի իւրաքանչիւր երևութից յետոյ և կենդանի պատկերների բոլոր աւելու- թեան ժամանակ՝ պրոսցէնիումի վերայ երեւում են և երեսը հանդիսականներին գար- ձուցած կիսաշրջան զտաւորութեամբ են 10 տղայ մարդ, 14 կին, ընդ ամէնը 24 հոգի որոնք որ կոչւում են «պահապան հրեշտակ- ներ»։ Սոքա հին ժամանակներում երևում էին մտացածին զգեստներով, զլիսին թռչնի փետուրէ պտակներով, ինչպէս որ երբեմնակի կոչումբոսի հնդկացիներին են նկարել։ Իսկ այժմ՝ նոքա զգեստաւորութեամբ են միջնադար- րեան թագաւորների և թագուհիների հան- զերձներով, ոսկէ թագերով և ոսկէ գօտիներ- րով։ Դասախմբի անդամների երեսի զծագը- րութիւնները կոպիտ են, րայց արտայայտիչ։ Այնպիսի կանայք կան, որ իւրեանց ձայնով ու զձագրութեամբ կատարեալ յարմարութիւն ունին «վալկիրիա» (վալհալայի պատերազմա- կան աստուածուհի) լինելու։

Մերկայացման երկրորդ բաղկացուցիչ մասն են կազմում հին կտակարանից կենդանի պատ- կերներ, որ օրինակով նախագուշակում են նոր կտակարանի եղելութիւնները։ 1890 թուին ձեւացան 22 այդպիսի պատկերներ։ Մոցանից ոմանք նոր կտակարանի հետ շատ հեռաւոր առընչութիւն ունին և թոյլ կերպով են կա- պուած. թող ապացոյց լինի հեռեկայ րայցա- արութիւնը, որով գտասխուսմբը մեկնում է Ար- տաշիսի երեսից, Ասթինէի մերձումը և Մս- թերի արքայական արկնութեան կոչուելու զէպքը։

Տեսէք, որ Ասթինէն, այս գոռոզը մեր- ժութեամբ է. Մի օրինակի թէ Աստուած ինչպէս պիտի վարուի Հրէից ժողովրդանոցի հետ։

Այս պատկերների ձեւացման գործում՝ Օրեր Ամմերգաուի զիւզացիներին օգնել են Միւնխէնի առաջնակարգ արուեստագէտները, որոնք պատկերները յօրինել են իտալական զեղարուեստի լաւագոյն ժամանակի՝ XVI դա- րու ոճով։

Վերջապէս ներկայացման երրորդ ամէ- նակական մասն է բուն ողբերգութիւնը, որ բաղկացած է 17 գործողութիւններից և բազմաթիւ տեսարաններից։ Մերկայացումն

սկսում է իշոյ վերայ նստած Բրիստոսի մուտքով Մրուսաղէմ քաղաքը։— Կամարների տակի անցքերից, այսինքն Մրուսաղէմի փո- ղոցներից, ժողովրդեան մեծամեծ ամբոխու- թիւններ հասում են զէպի պրոսցէնիումը։ Բրիստոսը շտապով մանում է տաճարը և այն տեղից դուրս է հանում և վռնտում է վաճառողներին և գնողներին։— Բրիստոսն ու աշակերտները այնպիսի հագուստներով են, ինչպէս որ նոցա նկարել են Տիցիանն ու Ռա- փայէլը։ Ամբոխը զուգուած է արեւելեան տա- րազի գոյնզգոյն պայծառ շորերով, նա այն- պէս ազատութեամբ և անբռնազրօս է շարժ- ւում, ինչպէս որ մայնինդէնեան դերասանա- կան խումբը կատարեալ զեղարուեստական շարժումներով միշտ հիացրել է նուրբ ճաշա- կագէտներին։ Բայց հարկաւ շատ անգամ Բը- րիստոսին այնպիսի խօսքեր են ասեցնել տա- լիս, որ աւետարանում չկան, թէպէտ այս տեսակ յաւելուածները զեղեցիկ համեմա- տութեամբ աւետարանական պատմուածքին յարմարեցուցած են։

Ապա սկսում է Կայիափայի մօտ քա- հանայապետների և դպիրների խորհուրդը, որ ամբողջովին՝ սկզբից մինչև վերջը պէտք է նոր շարադրուէր։ Շարադրութիւնը վատ չէ, զլիսաւոր փոյթն այն է, որ իրանց ձեռքը ձը- զեն և բռնեն Բրիստոսին, դպիրները ճանա- չում են մի արծաթասիրին, և վճռել են նո- բան կռել իրանց մօտ և զբաւել իրանց գոր- ծի համար։ Այնուհետև Բիթանիայում Բը- րիստոսը խօսում է աշակերտների հետ մօ- տալուտ բաղարջակերաց տօնի առթով. գա- լիս են Ղազարոսն ու քոյրերը. Բրիստոսը մօրից հրաժեշտ է առնում։— Այս ընտանե- կան շրջանում, ուր շնչում է միայն սէր, մտերմութիւն և սրտաուշ զգացումներ, խա- ւար բիժ է կազմում մասնիչի անձնաւորու- թիւնը, որ աւետարանին բաւական հաւա- տարմութեամբ է նկարագրուած, րայց յօ- րինուած է զարմանալի նուրբ զեղարուեստով և չափազանցօրէն չէ սաստկացուցած, որ իւր մէջ մարմնացնէ մի զժողային զիւախորխտ շարա- մտութիւն։ Սորա մէջ թողել են մարդկային անպաճօյճ կերպարանքը, այնպէս որ մենք հաս- կանում ենք նորա մոլեկան շարժառիթները։

մի բիրտ: անողորմ, սահմանափակ մարդու վճռականութիւնը որ իւր կուրամտութեամբ Բրիտտոսից զժգոհելու անձնական պատճառներ ունի: Դա ի բնէ մի ընչաքաղց և զիղոզ ժլատ է. Բրիտտոսը ի զուր չէր ընտրել զորան միաբանութեան ծախսարար և կռուվարիչ այն արկղի որ հաւատացել էր դորա ձեռքին և որ սպառուում էր Փրկչի առատաձեռնութեան պատճառով: Դա անկեղծ պըրտով ափսոսում է, որ 300 զահեկանի միայն նարդեան իւղ վաճառեցաւ Փրկչի ոտքերը օժանելու համար:— Դա տանջուում է անհամբերութիւնից, որովհետեւ ուրիշների հետ ի միասին հաւատում է, թէ Բրիտտոսի ձեռքով հրեից թաղաւորութիւնը պէտք է վերահաստատուի. բայց երբ որ լսեց, թէ Բրիտտոսը պատրաստուում է իւր անձը ոչխարների համար դնել, սաստիկ շփոթուեցաւ և մտաանջ եղաւ. թէ հասկա ի՞նչ պիտի լինի իւր վախճանը, էլ ո՞վ պիտի հոգայ իւր մասին, եթէ ոչ ինքը (Միթէ ես չեմ քսակակալ և մատակարար): Զայրացած բոպէին նորան մօտենում են քահանայապետի ուղարկած մարդիկ, որոնց նա մտերմաբար յայտնում է իւր սրտի գաղանձքները, կարծելով թէ նոքա տենչում են Բրիտտոսի աշակերտ դառնալու: Մա հաղորդում է, թէ Բրիտտոսից էլ ոչինչ սպասելիք չկայ, թէ Բրիտտոսը պատրաստուում է մեռնել և շուայլում է իւր աշակերտների հասարակաց գանձը: Եկողները հաւանեցնում են Յուդային, որ ցոյց տայ վարդապետի ապաստանարանը, որ և նա վերջի վերջոյ կատարում է, հաւատացած գողով թէ հէնց ինքը Բրիտտոսի պաշտպան կը հանդիսանայ քահանայապետի առաջ: Մա յոյս ունի թէ Բրիտտոսը առժամանակ կը բանտարկուի և բաժանուում է ուղարկած մարդկանցից, հաւատարմաբար իւր ձեռքով նոցա ձեռքը թօթուելով, կարծես թէ գերմանացու պէս ասելով. «խօսքս աղայ մարդու խօսք է»: Մենակ մնալով ինքն իրան հետ խորհրդածում է մի մենախօսութեամբ, որ շէքսպիրեան ոճով է յօրինած. «Եթէ նորան բանտարկեն—ես լաւ վարձատրութիւն կը ստանամ, իսկ եթէ նա յաղթէ, թողութիւն կը խնդրեմ. նա բարի և ողորմած է:

Ես խիստպէս նորան չեմ դաւաճանում, ես միայն տեղեկութիւն տուեցի, թէ ուր կը գանուի նա: Սկսում է լայն վրձինով նկարած Խորհրդաւոր Երեկոյի տեսարանը, ամբողջապէս ըստ աւետարանի, շատ անգամ գրեթէ բառացի կատարմամբ, այսինքն մի ըստ միջէ հետեւում են՝ ոտնալուան, հացի բեկումը (առէք կերէք . . .), զինու ըմպումը և ապագայ մատնիչի ցուցումը, թէ նա Բրիտտոսի հետ ի միասին ձեռքը պիտի մսէ սկաւառակի մէջ: Ապա Գեթսեմանի պարտիզի տեսարանի մէջ, որ ճիշդ ըստ աւետարանի ներկայացուեցաւ, միջամտեց մի գերբնական տարր, որ և զարմանալի չպէտք է լինի մի կրօնական տեսարանում. ամպերից իջնում է բաժակը ձեռին մի հրեշտակ այն քարի վերայ, որի մօտ Բրիտտոսը արամած նուազում է, և զօրացնում է Սորան:— Յետոյ երևեցաւ Յուդան զինուած մարդիկներով, Մաղքոսի ականջը կտրեցին. Բրիտտոսին կալանաւորեցին: Օրեր Ամմերգառուի մէջ այս տեսարանը կատարուում է ոչ թէ կէս զիշերին, այլ ճիշդ կէս օրին, և այնու վերջանում է ներկայացման առաջին բաժանմունքը:— Մէկ ու կէս ժամ ընդմիջումից յետոյ շարունակ անընդհատ կատարում է նեարդերի վերայ խիստ աղէտալի կերպով ներգործող Բրիտտոսի չարչարանաց սոսկալի եղբերագութիւնը: Գրեթէ ամբողջ գործողութիւնը հանդիսանում է բացօթեայ—կամ պրոսցենիումի վերայ ուղիղ հանդիսականների առաջ, և կամ երկու կողմնակի նախադաւիթների վերայ, աջ կողմը Կայիափայլի դռան առաջ, ձախ կողմը Պիղատոսի դռան առաջ. Բրիտտոսին նախ կանգնեցնում են Աննայի հանդէպ, ապա նորա փեսայ՝ քահանայապետ Կայիափայլի հանդէպ: Բոլոր անդամների միաբան խորհրդով մահապարտութեան վճիռ է կարգացում, Պետրոսի ուրացութիւնից յետոյ զայիս է զգջացած Յուդան, որ դարձնէ խորհրդեան իւր ստացած արժաթը, և չք կարողանալով փրկել Բրիտտոսին՝ գեանին է շարում զրամը: Զինուորները աթոռի վերայ են նստեցնում փշեայ պատիով պատկուած

և զրեթէ մերկ Բրիտանոսինս նորան երկըր-
պաղում են: Իսկ ապա վայր են ձգում գեա-
նի վերայ:— Երբ որ Բրիտանոսին հեռացնում
են որ մահու վճիռը հաստատել տան մի-
ջին շէնքում դարձեալ երևում է Յուդան և
իւր պարանոցին կապում է պարանը, վարա-
զոյրը հէնց այն բողեկին է իջնում: Երբ որ
նա կախ է ընկնում:

Երևելի է կատարուած Պիղատոսի նկա-
րադիրը: Այս անախհիւստիք ոտից մինչև
գլուխ կատարեալ հռովմայեցի է. սրտով ար-
դարասէր գործի միւս կողմից բնաւորութեամբ
այնքան թոյլ է, որ Բրիտանոսի ազատութեան
համար զործ դրած իւր բոլոր ջանքերով՝ ա-
ւելի վնասեց Սորան, որովհետև այդ միջոցով
աւելի զայրացան և շատացան Փրկչի դէմ՝
յարուցած հայհոյանքներն ու Սորան պատ-
ճառած ամենանքները: Պիղատոսը հրէանե-
րին առում է: Սա իրրև իրաւագէտ ճգնում
է ոճրի ստուգութիւնն ունենալ, ուստի և
պահանջում է ապացոյցներ: Սակայն փո-
խանակ ապացոյցներին նա լսում է միայն
աղաղակ և հայհոյանք: Այս անխելք սիրըն-
քորից անձրանալով, իւր մտքի մէջ ծնած
մի պատճառանքից է բռնում, որպէս զի ի-
րանից հեռացնէ Բրիտանոսի դատապարտու-
թեան հարկը. «Թուում է, թէ դա Գալի-
լիացի է, տարէք ուրեմն շերովգէս արքայի
մօտ»:

Վատ չէ յօրինուած նմանապէս և Հե-
րովգէսի նկարագիրը. դա մի հեշտասէր և
ամբարիշտ է, բոցը հրաշքներին հաւատացող,
և սաստիկ ցանկանում է, որ Յիսուսը իրան
մի հմայութիւն ցոյց տայ— գիշերը ցերեկ
գործնէ կամ զաւազանը՝ օձ, որովհետև նո-
րան հմայ է համարում: Բրիտանոսի լուս թիւ-
նից զայրացած, նա վճռում է ծագու առար-
կայ շինել նորան և որովհետև լսել է, թէ
նա ինքն իրան հրէից թագաւոր է կոչել, ըս-
տիտակ հանդերձներ հազցնել տուեց և այն-
պէս դարձրեց նորան Պիղատոսի մօտ:— Այս
անտիհիւստիք առաջ Բրիտանոսը ներկայա-
նում է զրեթէ մերկ, վերան միայն մի արկիօ
(զապաւարտիկ) և կտուրի դօտիկ, ձեռքերը
կապած, և ամբողջ մարմինը զլիսի վէրքերից
հոսող արեան շերտերով ներկուած: Պիղա-

տոսը խորամանկութիւն է բանեցնում հրէից
դէմ, նախ փորձում է բաւականանալ ձախ-
կելով և խրատելով, ապա առաջարկում է
թողնել ժողովրդի ընտրութեան, արգեօք ո-
րին կուզենայ նա արձակել— Բրիտանոսին թէ
Բարաբբային և այս իրաւարանական հնարա-
գիտութիւնը աւելի յաջող համարելով, ա-
սում է ձերբերին, քահանաներին և դպիր-
ներին. «Դուք չէք ժողովուրդը թող այն ժո-
ղովուրդը իւր կամքը յայտնէ, որ սորան ով-
սանաներով է փառաբանել»: Այս լսելով
քահանայապետները իսկոյն ամենայն կողմերը
առաքեցին իրանց հաւատարիմներին, որ ժո-
ղովրդեան զրգռեն Բրիտանոսի դէմ և հաւա-
նեցուցանեն Բարաբբայի համար:— Այս մի-
ջոցին բեմի յետեից կատարում է գանահա-
րութիւնը, իսկ ապա բեմի վերայ զլիսուոր
շէնքում՝ Բրիտանոսի զլիսին ամբացնում են
փշեայ պսակի ծիրանի քղամիդ են հազցնում
և ձեռքի մէջ դնում են եղէզ գայիսոնի տեղ:

Աւանձին երևութով կատարում է ժո-
ղովրդեան խռովութիւնը, ամբողջ դերասա-
նական խումբը խանում է պրոսցէնիումի վե-
րայ— ձեր, հաստկաւոր և մանուկ, սյսա-
հարուած, վագրի կատաղութեամբ մանչելով,
ահաւելի ժխորով պահանջում են, որ Բրիտ-
անոս ի խաչ հանուի. Բրիտանոսին զուրս են
բերում Պիղատոսի պալատից: Սա հանդարտ
իջնում է սանդուղով վերան մի երկար վե-
րարկու, ձեռքերը կապած, երեսը դէպի ժո-
ղովուրդն ու հանդիսականները:— Հրէից խը-
ռովութիւնից Պիղատոսը շփոթուում է, լուա-
նում է ձեռքերը յարակցելով, թէ մեծագոյն
չարիքից զերծ մնալու համար, կատարում է
խռովարարների փափագը: Դատաստանական
ձեւ կատարում է, ատենադպիրը կարգում
է վճիռը, ժողովուրդը ցնծում է, որ իւր
ձեռքը յանձնուեցաւ Բրիտանոսը:— Գեղա-
րուեստի բարձր աստիճան է ներկայացնում
թափորական գնացքը դէպի Գողգոթա. առ-
ջևից կանգնում է ձիու վերայ նստած հա-
րիւրապետը և շարժում են զինուորները,
ապա զարիս է խաչափայտի ծանրութիւնից
թուլացող Բրիտանոսը, որին արգահատում են
նոյն իսկ իւր զահիճները, ուստի և Սիմօն
Սիբրեանացուն են ստիպում բարձել խաչը:

Քրիստոսը տեսնուում է մօր հետ: Կանանցից մէկը Քրիստոսի երեսը սրբում է թաշկինակով:

Սախ քան խաչելութեան նուիրած երեւոյթը, հանդէս է դալիս պահապան հրեշտակների դասը սե զգեստներով: Սոցա խմբական երգեցողութեան ժամանակ բեմի յետեւից լըսուում է մուրճերի բախոց: Երբ որ զլիսաւոր շէնքը ծածկող վարազոյրը բարձրանում է, երկու աւազակներն արդէն կախուած են իրանց կախազանների վերայ, իսկ Քրիստոսը հորիզոնական դրութեամբ պառկած է խաչի վերայ, որը պէտք է վերացուի և գետնի մէջ մխուի: Քրիստոսի գերը կատարող Մաիրի խօսքին նայելով խաչի վերայ կախ մնալը—անտանելի դրութիւն է, որ եթէ սահմանած միջոցից աւելի աւել, գերասանը անշուշտ պիտի ուշաթափուի: Հէնց այդպէս էլ պատահել է մի անգամ Մաիրի հետ, որը էլի էլի լամն սարաքղանի արտասանելուց յետոյ՝ գիտակցութիւնը կորցրեց և ուշքի չեկաւ: մինչև որ խաչից վայր չբերուեցաւ: Քրիստոսի խաչի վերացումն ու գետնի մէջ հաստատութիւնը հանգիստականների վերայ այնպիսի տպաւորութիւն է գործում, որ զեղարուեստութեան սահմաններից հակառակ է, ամէնքը տանջուում են ներագային քստման զրգուութիւնից, չափից դուրս իրական մանրամասնութիւններից: Չեռքերի և ոտքերի վերայ բեւեռների պէս բաներ են նշմարուում, մարմնի անդամների վերայ արիւնը յորդ կաթկթում է:—Խաչելութիւնը տեսնում է քսան բոպէ: Քրիստոսին ներկայացնող Մաիրը իւր արիկոյի տակ մի գրահ ունէր, որ կարթի միջնորդութեամբ պնդացուցած էր խաչափայտին: Աւազակների ծնկների ջախջախումը մտաց պատրանք անգամ չի առաջացնում, այնքան կոպիտ կերպով է կատարուում: Երկու զահի՞՞ բամբակով լցրած ահալին կաշուէ լախտերը ձեռին՝ չորս անգամ գարկում են աւազակներին և ասում. «հերիք ապրեցար»: Հարիւրապետի կարգադրութեամբ Քրիստոսի կողի ծակից այնպէս է կատարուում որ արիկոյի տակի բշտից արեան նման կարմիր հեղուկ է թափուում:—Սրտաշարժ և գեղեցիկ է խաչից իջեցումը և թաղումը: Սրանով էլ կարող էր վերջանալ ներկայացումը: Սակայն կրօնական տեսակէտից նայելով, նա լրա-

ցած չէր լինի առանց յարութեան, որ այժմ շատ կարճ է կատարուում, մի քառորդ ժամ: Մենք տեսնում ենք պահապաններին ս. զերեզմանի մօտ, յանկարծ լըս է փայլում, գերեզմանի քարը թաւալուում է: Քրիստոսը երեւում է սպիտակ զգեցած և հեռանում է բեմից, մինչև զինուորները բերանարաց տարակուսում են և վճռում ինչ զնալ և եղելութիւնը յայտնել քահանայապետներին: Ապա խումբը երգում է՝ Քրիստոս յարեաւ և ալելուիա իսկ բեմի խորքում փառաց մէջ ամբառնում է յարուցեալ Քրիստոսը:—Ներկայացումը վերջանում է մօտ ժամի 6-ին զինի ճաշու:

4.

Մնում է մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ տալ անդրբեմական հանգամանքների մասին, այն է դերասանների և ապա նաև դրամական պարագանների մասին, որից մեծ կախում ունի Օրեր Ամերգաուի համայնքի բարեկեցութիւնը:

Այս կրօնական ներկայացումը ձեռնարկող զուխը կամ տնօրէնը (impresario) ոչ թէ մի անձնաւորութիւն է, այլ Օրեր Ամերգաուի ամբողջ համայնքը, որ բաղկացած է 217 արներից: 1890 թ. համայնքից ընտրուած յանձնաժողովին նախագահում էր բուրգովիտար Լոնգ, որ և Կայիափա էր թատերախաղում իսկ նորա դուստրներից մէկը ներկայացնում էր Ատուածամօր և միւսը՝ Մարթային: Սոցա ազգականներից մէկը՝ նկարչութեան ուսուցիչը կենդանի պատկերներ էր յորինում: Այդ յանձնախմբի առաջնորդ և զլիսաւոր ոգևորիչն էր տեղական քահանան: Օրեր Ամերգաուի մէջ գերերը ժառանգական չեն, այլ յանձնուում են համայնքի անդամ գրուածներին և երկար ժամանակ մնում են մի և նոյն անձի ձեռքում, որ բայց և այնպէս աստիճանաբար կարող է մի գերի փոխարէն այլ գեր ստանալ: Մանուկի դերից սկսելով, գերասանը հետեւեալ տասնամեակին դառնում է ԅովհաննէս առաքեալ, մի տասը տարի ևս անցնելուց յետոյ, գեւորներ են պատահել, որ նախկին ԅովհաննէսը ապա դարձել է ԅուզա Իսկարիովտա-

ցիւ Ոմանք միշտ և հանապազ Պետրոս առաքեալ մնալով, առաջ սաթի պէս սև մազեր են ունեցեր, ապա լուսնի պէս ալիք:— Բենդլը որ նախ Յովհաննէս էր, ապա Պիղատոս 1870 թ. սկսեց մրցել Մախրի հետ, թէ ո՞վ նոցանից Բրիտոսի դեր խաղայ: Մախրը յաղթեց և 3 ժամանակամիջոց պարզերես ծառայեց (1870, 1880 և 1890 թ.) և 47 տարեկան հասակն առնելով վերջնականապէս թողնում է իւր թատրոնական պաշտօնը, որովհետև և՛ ալեորուել է, և՛ սոսկ արիկոյով ցրտի մէջ ներկայացնելուց իսպառ տկարացել է, և՛ անբուժելի յօղացաւ ունի: Ծրբ որ 1890 թ. Մախրը այնպէս տկարացաւ որ կասկածում էին թէ նա չպիտի կարողանայ խաղայ, համայնքը վճռեց այդ դերը ստանձնել նախկին Պիղատոս-Բենդլին, ուստի և յատուկ նորահամար բերել տուեցին Միւնխէնից նոյն իսկ մի կեղծամ սակայն այսպիսի փոփոխութեան մտածութիւնն անգամ հարկ եղաւ բնաւին թող տալ որովհետև Բենդլը դերի համար հանդիսացաւ մի անվայելուչ և անհամապատասխան մարդ: Նա իւր մտայլութեամբ խրատաշնչութեամբ իսպառ զուրկ էր այնպիսի հրեշտականման մեղմութիւնից և փափկութիւնից, որ ժողովրդական երեակայութեան մէջ անմեկին է Բրիտոսի պատկերում. նա չպիտի կարողանար այնպէս ներգործել հանգիսականների վերայ, որ նոցա սրտի մէջ շարժուի կարեկցութիւն և ցառակցութիւն, վտանգ էր սպառնում թէ զուցէ ներկայացումները ընդհատուին, գործադուլ լինի, ամբողջ ձեռնարկութիւնը կործանուի, որ պատրաստուել էր մեծամեծ ծախքերով այնպէս որ արդէն 200,000 մարկ ջուրը ձգած պիտի համարուէր: Այս տաղանայր համայնքի մէջ այն բանից էր ծագել, որ մայիսի 25-ին Մախրի ատամը սկսել էր ցաւել: Ծարաթ օր 31-ին նա հանել տուեց ցաւած ատամը, բայց կսկիծը չէր դադարում և այսը խիստ ուռել էր, Հանդիսականներն անթիւ բաղմութեամբ արդէն հաւաքուել էին, իսկ եղանակը անձրեային էր, Բժիշկները խրատիւ արգելել էին մտածել անգամ խաղի մասին: Մախրը ամբողջ գիշեր տենդով տառապեց, Հետեւեալ օրը առաւօտեան ժամի 6-ին բուրգոմիտորը՝ Մախրի կամքը չհարցնելով

ներկայացման պատրաստուելու նշան տուեց, թնդանօթից արձակել տալով:— Հէնց որ հիւանդը անակնկալ կերպով թնդանօթի ձայն լուսեց, մահճակալից վայր թռաւ, ասելով. «Թող լինի ինչ որ լինելու է», հազաւ տրիկօն, զոնաց թատրոնը և խաղաց դերը, թէպէտ զունատուած դէմքով և ուռած սյտով: Այսպէս փարատուեցան համայնքի երկիւղները:

Մախրի կեանքից մի այլ դէպք ևս կը պատմենք, որ ապացոյց է, թէ դա որչափ կարեւոր անձ էր համայնքի համար: Առաջ դա մի աղքատ փորագրիչ էր: 1867 թ.-ին, երբ որ հազիւ 26 տարեկան էր, երբ որ նորաբողբջ առջից երիտասարդութեան հասակումն էր, երբ որ նորա աղուամաղը բաւական բուսել էր և երբ որ ստուգուեցաւ որ հիանալի տենորի (վերնաբամբ) ձայն ունի, համայնքը միաձայն ընտրեց Բրիտոսի դերի համար զորան, որ Բենդլի դէմ ակոյտեան էր դուրս եկել: Արդէն առաջին փորձից ամէնքը համոզուեցան, թէ դա պատուականագոյն Բրիտոս է և հաւասարը երբէք չի եղել: 1870-ին բացուեցաւ Փրանկո-պրուսական պատերազմը և Մախրը՝ իրբև պահեստի զինուոր՝ իւր զօրաբաժնի հետ գնաց Միւնխէն, որ այն տեղից պատերազմի դաշար երթայ: Օրեր Ամմերգաուի յուսահատութիւնը չափ չունէր, մի պատգամաւորութիւն ուղարկուեցաւ Լուդովիկոս II թագաւորին ամենախոնարհ աղերսով, որ Մախրը բերդապահ զօրքի մէջ թողնուի, որ նորան հրաման արուի իւր հրաշայի մաշկամրգազոյն մագերը չխուզել և մորուքը չածելիլ: Թագաւորազները բարեխօսեցին յօգուտ նորա. թագաւորը զթաց համայնքի վերայ, որ իւր անման Բրիտոսի համար տազնապում էր, և կատարեց խնդիրը: —

Տարակոյս չկայ, որ Օրեր Ամմերգաուի մէջ իւրաքանչիւր տասնամեակի հետ փոխուում են և՛ հանդիսականները և՛ բարքերը և՛ նոյն իսկ տեւարանի ոգին: Հետեւալ վիճակագրական տեղեկութիւններից լաւ է երևում այդպիսի փոփոխութեանց բնութիւնը:

1880 թ.-ին արուել է 40 ներկայացում, 121,000 հանդիսականներ են եղել, տոմսակ է վաճառուել 333,000 մարկի, 6,000 մարկ

էլ գոյացել է տպագրած խօսքերի և (գերասանների ու զործողութեան տեսարանների) լուսանկարների վաճառումից, ընդ ամէնը եկամուտ է եղել 336,000 մարկ: — Այս մուտքից ծախսուել է.

Ներկայացման փոխառութեան տոկոսը	վճարելու	3,000
Շէնքի վերանորոգութեան և զգեստների		78,000
Փորձոյ թատրոնի և նորա հանդերձանքի		7,000
Պահեստի մայրագումարը ամեցնելու		44,000
Գիւղական ուսումնարանի բնակարանը ընդարձակելու		11,000
Դպրոցների, աղքատների, նկարչութեան և քանդակագործութեան դպրոցի		23,000
Տեղական եկեղեցու, վտակի տաշար քարելու, հրդեհաշէջ մեքենայի, սալայատակի		12,000
		<hr/>
		178,000 մարկ

Եկամուտից ծախքը դուրս գալով, մնացորդն է 158,000 մարկ, որ բաշխուել է հետեւեալ կերպով.

Աղքատներին	1,500
207 տանտէրներին	40,000

Ներկայացման մասնակցող գերասաններին, երաժիշտներին և ստատիստներին (երեակներին) 116,500

Ներկայացումներում մասնակցել են 700 մարդիկ, ուրեմն միջին թուով նոցանից իւրաքանչիւրը ստացել է 166 մարկ կամ 4 մարկ քառասուն ներկայացումներից ամէն մէկի համար: Եթէ ի նկատի առնունք այն հանգամանքը, որ այս ներկայացումների շարքը կատարուում է 10 տարին մի անգամ այն ժամանակ վարձատրութիւնը չնչին պիտի համարուի: Մտիւրը 1880 թ. իւր աշխատած զբամով կարողացել է բաց անել փորագրութեան ապրանքի խանութ և գնել երկրորդ կով:

Ճեռնարկութեան յաջողութեան աճումը նկատելով՝ համայնքը ստիպուեցաւ նոյն իսկ ձեռնարկութիւնն էլ խիստ ընդարձակել: Կանխաւ հաւատարմ յայտնի էր թէ այս անգամ (1890 թ.) հանդիսակոնների խիստ ստուար բազմութիւն հաւաքուելու է, այն

ևս ոչ միայն զիւղացիք, այլ առաւելագու աշխարհքի ամենայն ծայրերից հարուստ այցելուներ: Յրուեցին ամէն կերպի զովասանական յայտարարութիւնների, բեկլամների: Ինքս տեսայ Գայիցիայում հռոնգարիայում և Բոհեմիայում՝ գէպի Օրեր Ամմերգաու տանող էժանացած գնացքների յայտարարութիւնները: Երեսը պարզ անելու համար՝ համայնքը համարձակ քայլ գործեց և 200,000 մարկ գումարի փոխառութիւն արեց և նորից շինեց թատրոնը, նոյնը վատիկանի սիկստինեան կապելլայի օրինակով զարդարելով: Այսպիսի վտանգաւոր ծախքերից յետոյ՝ եթէ եկամուտը 500,000 մարկից աւելի չհասնէր, այդ պիտի համարուէր ձեռնարկութեան անյաջողութիւն և զուտ վնաս, որ բայց և այնպէս 1890-ին չպատահեցաւ: Ահա այդ ժամանակն էր, երբ որ Մտիւրի ատամի ցաւն էլ սկսուեցաւ, բայց որ այնքան վտանգների վերայ խոտորնակին խոտորնակ չդարձաւ:

Արդէն յուլիսի վերջերը, երբ որ ես Օրեր Ամմերգաուի մէջ էի, յայտնի էր, որ ձեռնարկութիւնը պիտի զլուխ գայ թէ պարտքը կը վճարուի և գերասանները սովորականից աւելի վարձատրութիւն կը ստանան: Այս աւելորդը հարկաւ այնքան էլ նշանաւոր չի լինի, որ գերասանները կարողանան ազահով առուտուր սկսել, մանաւանդ որ մի խղից մինչև միւսի ասանամեայ տեղութիւնը՝ աւելի նուազեցնում է ստացած վաստակի քանակութիւնը: — Այնու ամենայնիւ այս գեղարուեստասէր զիւղի մէջ շահագիտական ոգին արդէն մուտք է զործում: Այժմ՝ աշխատում են այցելուների համաշխարհային ճաշակին զանազան արդիւնագործութիւններով յարմարուիլ, Լեխներ շինականը, նախկին Յուգան, բացել է Pension Lechner, օրական 20 մարկ վճար սահմանելով իւրաքանչիւր հիւրից: Գիշերելու համար եթթիկի յարկում կամ զարմանանոցի մէջ տեղափոխուող զիւղացիները՝ օրական 3 կամ 4 մարկ են ստանում իւրաքանչիւր մահճակալի համար, իսկ ոմանք իւրեանց տները ներկայացմանց միջոցներին 10 հազար և աւելի մարկ կապալով են տալիս: Փոխանակ զիւղական ծաշարանների ընտիր գարեջրով՝ այժմ շեն պակասում

պանդոկներ նրբաճաշակ համադամներով, լըյս են ընկել զիննվաճառանոց Bodega և Restaurant Lucullus. Պարտենիկիրխէնի լուսանկարիչը 1880-ին համայնքին վճարեց 3000 մարկ, որ բացառիկ իրաւունք ունենար թանրոնին վերաբերեալ լուսանկարները ծախու հանելու: 1890 թուին Վիէնայի լուսանկարչութիւնը այդ իրաւունքը գնեց 37,000 մարկով: Մօտերումս բուրգոմիսար Լոնգը դառնութեամբ ասել է, թէ շատ անգամ ցանկութիւն է ունեցել խարազանով դուրս մղել այդ վաճառամուններին տաճարից, բայց այժմ՝ դոցա թիւն արդէն շատ է շատացել:

Դրսի մարդկանց կողմից ձգտումներ է եղել իրանց ձեռքն առնելու Օրեր Ամմերգաուի ներկայացումները, բայց համայնքը խիստ ընդգիմացել է: Այսպէս օրինակ մի մեծատուն կին, Վիլհելմինէ Փօն Հիլլերն, որ Մաիրի խաղին խիստ սիրահար էր, փառասիրութիւն ունեցաւ ազդեցութիւն գործել ներկայացումների վերայ և յանձնաժողովի անդամ ընտրուելը որպէս զի ամբողջ ձեռնարկութիւնը ժամանակի ոգուն յարմարեցնել և արդի ճաշակի և նոր սովորութեանց համեմատ նորոգել տայ: Նա կարողացաւ ստանալ Միւնխէնի արուեստագէտների գործակցութեան յօժարութիւն, նախարարների հաւանութիւն, տեղական արքեպիսկոպոսի յանձնարարական նամակներ: Մտադրութիւն կար երաժշտութիւնը փոխել, թատերախաղի խօսքերը նորից շարադրել: Երբ որ այս ընդարձակ ծրագիրները հռչակուեցան և բուրգոմիսար Լոնգը համայնական ժողով գումարեց, ժողովուրդը սաստիկ յուզուեցաւ, խռովութիւն հանեց և միաձայն որոշեց ամենայն ինչ թողնել հին ձևով և տիկնոջ հետ բանակցութիւնները խօսառ դադարեցնել: Այժմ նորա միջամտութիւնը մերժուեցաւ և նորա ձեռնձգութիւնները արհամարհուեցան, բայց նորութեան օգին սպրդեցաւ զիւղի մէջ և ամէնքին գայթակղեցրեց. մենք արդէն տեսանք, որ նախնական բարքերը սկսեցին ապականուել և խտորնակ ընթացք ստանալ:

5.

Ակամայ խնդիր է ծագում. ի՞նչ պիտի

լինի Օրեր Ամմերգաուի ներկայացումների ապագան: Այս խնդիրը լուրջ խորհրդածութեան նիւթ է, որովհետեւ 1890 թուի նորոգութիւնները շօշափեցին միայն նոցա զարդու պաճուճանքը, այսինքն նոցա անէական արտաքին կողմը, իսկ ապագոյ բարեկորդութիւնները պէտք է տարածուին թէ խմբական և գործիական երաժշտութեան վերայ և թէ մանաւանդ թատերախաղի բնագրի վերայ: Արդ այս բարդ ամբողջութեան մէջ որ տեսակէտից կը ձեռնարկուի բարեփոխութիւնը, ի՞նչ նպատակներ առաւելապէս առաջնորդող կը դառնան—գեղարուեստական թէ կրօնական նպատակներ:


Ենթադրենք, թէ այս յափշտակութիւնը միակողմանի լինի—սոսկ գեղարուեստական կողմին նպաստող՝ թէ կրօնական պահանջներն ու պատմական ճշմարտութիւնը երկրորդական պարագայ համարելով՝ բարեփոխութեան միակ նպատակ դրուի բարձրագոյն, զօրեղագոյն և խորթթափանց գեղասիրական հաճոյք:—Այն ժամանակ հարկ կը լինի ամենայն ինչ փոփոխել արմատով, այդ ղէպքում փոխանակ մի ոմն Դեղլերի գեղջկական երաժշտութեան հարկաւոր կը լինի տալ Վազների բարձր ճաշակով օրատորիա (հոգեբոյութիւն) կամ հրաշակաւոր Reguim-ների նման ձայնական-գործիական ընտիր գեղարուեստ (Ք. հանդստեան պատարագ երաժշտութեամբ). թերևս երաժշտական մասը բնաւին աւելորդ ևս համարուի որովհետեւ գանազան արուեստների միաւորութիւնը աւելի թոյլ տպաւորութիւն է գործում, քան բարձր կատարելագործութեան հասուցած միայն մի արուեստի ապաւորութիւնը: Ուրեմն հարկ կը լինի կամ հոգեւոր երաժշտութիւնը զօհել և զօհանալ միայն ողբերգական բանագործութեամբ և կամ ընդհակառակը վարուել: Աւելի հեշտ կը լինի զօհել երաժշտութիւնը: Նմանապէս հնարաւոր է առանց վնասու մէջ տեղից վերցնել հնացած, անհամ կենդանի պատկերները, որոնք լի աստուածաբանական սքորաստիկայի ծնունդ են:

Եթէ կենդանի պատկերները մերժուին, եթէ երաժշտական տարրը վերանայ կամ բանագործութեան մէջ երկրորդական տեղ

բունէ) այն ժամանակ ազատ զեղարուեստական սակզճագործութեան օրինօք՝ նոյն իսկ բանագործութիւնը դարու ճաշակի համեմատանդագար միշտ պիտի փոփոխուի մինչև որ անճանաչելի դառնայ: Ետև և առաջ բանագործութիւնից դուրս կը հանուի գերբնական տարրը՝ առանց որոյ ոչ մի կրօնական տեսլարան խորհուրդ չունի: Ապա որովհետև գեղարուեստը պատմութիւնից և բնութիւնից միայն մի քանի իրողութիւններ է փոխարինում որպէս զի մնացածը բնական պահանջներէ համեմատ և ըստ քմաց զօրացնէ կամ նոր յօրինէ և որովհետև այսպիսի նորասիրութիւնները՝ առանցութեան զազափարներէ հաստատուն հիմքն են խախտում ապա ուրեմն յիշեալ փոփոխութիւնները բողոք և ընդդիմութիւն կը յարուցանեն նոյն իսկ լուսաւորեալ և թերահաւատ շրջաններէ մէջ: Երասիրին թոյլ է արվում ապագրել ինչ որ ուզենայ՝ բայց ոչ՝ ամենայն բան բեմի վերայ հանդիսացնել՝ բեմի վերայ գերակշռող հանգամանք է զառնում ժողովրդեան ստորին խաւի կրօնական պահանջը: Եւ իրօք Օրեր Ամերգատուի մէջ այսպիսի պահանջները առաջնակարգ են: Տեղական արուեստը բացէրբաց զեղջկական արուեստ է և միայն այն պատճառով մինչ այսօր պահպանուում է, որ ըստ իւր տեսակի բարեպաշտական է: Թող միջնադարեան խորհուրդը արդի թատրոնի տիպ ստանայ—և օտարերկրացիներէից էլ ոչ ոք չի երթայ Օրեր Ամերգատու, Փարիզն ու Լոնդոնը թողած:

Այժմ դառնանք երկրորդ կողմը՝ ի նըկատի առնունք միայն կրօնականը մինչի կատարած աշխարհի հաստատուն սրբութեան երկրպագութիւնը կամ այն կրօնական իդէալը որ բարեպաշտի սրտում անսասան կանգուն է: Իսկական կրօնական տեսակէտից՝ գեղարուեստը մերժելի է: Դեղարուեստը՝ որպէս կրօնական գաղափարներ աւանդելու համար մի հնար՝ է հեթանոսական աւելորդութիւն բարեպաշտութիւնը կարօտ չէ արտաքին նեցուկների: Յատկապէս կրօնական գեղարուեստը՝ հերեալիտութիւն է սակայն երբ որ արդէն մի ժողովրդեան մէջ այն արիւն և մարմին է դարձել և մանաւանդ երբ որ ժո-

ղովրդեան վերայ բարերար կերպով է ազդում նա պէտք է այդ տեղ փայփայուի այն ևս խիստ պահպանողական կերպով: «Բրիտոսի չարչարանքը» Օրեր Ամերգատուի մէջ պահպանուած նշխարքի պէս մի բան է որ ժողովրդեան առաջ դուրս է բերում և փախուած տփի պէս 10 տարին մի անգամ բացում է: «Հաստատուն կացէք աւանդութեան» ոչինչ մի՛ փոփոխէք» ասաց Լուիզովիկոս Ա.ը Օրեր Ամերգատուեցիներին:—Մենք էլ նոյնը կարող ենք կրկնել: Օրեր Ամերգատուի ներկայացուցիչները՝ անցած դարերի հնութիւնը յիշատակող մնացորդներ են նոքա այնպիսի ժամանակների արտադրած կրօնական գեղարուեստ են և երբ որ հաւատը աւելի զօրեղ է եղել և այդ մնացորդը այժմ՝ աւանդութեամբ պահպանուում է զեղջուկը, որ իւր գեղարուեստական վարժութեամբ՝ լուս պատրաստուած է այդպիսի պահպանութեան համար: Ս. Ս.



ԵԿԵՂԵՅՑԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ



ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

— Լևոն ԺԳ. իւր ներկայ թուականի հսկանքներ 4 (ն. տ.) հրատարակած կոնգակով Քրանցիսկեան կարգի ստորաբաժանումները վերացնում և մի ընդհանուր կանոնադրութիւն է հաստատում այդ կարգին պատկանող բոլոր կրօնաօրենքի համար: Եթէ ի նկատի ունենանք այն կարևոր գերը որ Քրանցիսկեանները խաղացել են պատմութեան մէջ՝ հասկանալի կրկնելի որ Պապի այս նոր նշանաւոր քայլը իւր զօրեղ պատճառները պէտք է ունենար: Քրանցիսկեան կարգը ամենահինն է այսպէս կոչուած մաւրաշի կարգերից, որի հիմնադիրը եղել է ԺԳ. գարի սկզբներում Քրանց Աստիացին՝ կաթողիկեկեղեցւոյ արժանապէս ամենայարգի սուրբերից մէկը, արդէն երկու տարի իւր մահից յետոյ սրբոց կարգը դասուած և սրովիանեան վարդապետ պատուանունն ստացած, նորա նպատակն էր սկզբում իւր շուրջը մի եղբայրութիւն ժողովել, որ Քրիստոսի իւր աշակերտներին տուած պատուէրների համաձայն կեննէր պէտք է վարէր և աւետարանը քարոզէր անհաւատների ու եկեղեցուց խորթացանքի մէջ. բայց արդէն նորա կենդանութեան ժամանակ այդ եղբայրութիւնն այնչափ մեծացաւ որ